



CR
RC



Այս հետազոտությունը իրականացվել է Եվրասիա հիմնադրամի ծրագիր հանդիսացող և Նյու Յորքի Կարնեգի Կորպորացիայի կողմից ֆինանսավորվող Հետազոտական Ռեսուրսների Կովկասյան Կենտրոններ (ՀՌԿԿ) - Հայաստան կենտրոնի Հետազոտական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

Վերնագիր

«Կանանց դժվարությունները Հայաստանի զբաղվածության ոլորտում:
Հայաստանում կանանց քաղաքական ակտիվության հարցերը»

Ներկայացված է՝ ՀՌԿԿ-Հայաստան

Ներկայացված է Անահիտ Մկրտչյանի
կողմից, ՓԳԹ

Դրամաշնորհ # C05-7101

Տեղեկություններ՝ հասցե, էլեկտրոնային փոստի հասցե, հեռախոս, ֆաքս
Հայաստան, Երևան 375036, Հայաբլան 28, բն.23

anahitrubeni@yahoo.com

(3471) 34-42-79, 093 21-81-07

Երևան, Հայաստան, 2006

Բովանդակություն

Կանանց դժվարությունները Հայաստանի զբաղվածության ոլորտում:
Հայաստանում կանանց քաղաքական ակտիվության հարցերը

Գլուխ I. Կանանց դժվարությունները Հայաստանի զբաղվածության ոլորտում

1. *Կանանց գործազրկության առարկայական և ենթակայական գործոնները* 4-16
2. *Հայաստանյան ՀԿ-ների դերը կանանց մասնագիտական վերապատրաստման գործում* 17-24
3. *Հայաստանի զբաղվածության ոլորտում կանանց դժվարությունների հաղթահարման ուղիները* 25-30

Գլուխ II. Հայաստանում կանանց քաղաքական ակտիվության հարցերը

1. *Կանանց քաղաքական ակտիվության դրսևորումները*..... 31 - 35
2. *Քաղաքացիական հասարակության դերը կանանց քաղաքական ակտիվության ձևավորման գործընթացներում* 36-38

Օգտագործված գրականության ցանկ 39

Գլուխ I. Կանանց դժվարությունները Հայաստանի զբաղվածության ոլորտում

1. Կանանց գործազրկության առարկայական և ենթակայական գործոնները

Փոխակերպվող հայաստանյան հասարակության մեջ շուկայական հարաբերությունների, համակեցության արժեքային նոր համակարգի ձևավորման գործընթացներում տեսական ու գործնական նոր հնչեղություն է ստացել կանանց մասնակցային վարքի դրսևորման, սեփական կրթական, աշխատանքային կենսագրության կերտման հարցում պատասխանատվության ստանձման խնդիրը: Այս խնդրի ուսումնասիրության առնչությամբ կատարած մեր բազմակողմանի ուսումնասիրությունները հնարավորություն տվեցին կազմել Հայաստանի զբաղվածության ոլորտում կանանց վիճակի նկարագիրը և բացահայտել դժվարությունների առաջացմանը նպաստող առարկայական և ենթակայական գործոնները:

Խորհրդային շրջանում պետության կողմից մասնագիտական համակարգի, ձևական ու ոչ մրցակցային աշխատաշուկայի կառավարելիության և համահարթեցման արդյունքում աշխատաշուկայում խտրարարությունը հասցվել էր ավելի ցածր մակարդակի, քան անգամ Եվրոպական երկրներում էր¹: Այսօր վիճակը կտրուկ փոխվել է: Նախկին համակարգի փլուզումը, ժողովրդավարության ֆորմալ կառույցների ստեղծումն ու դրանց դեռևս թույլ ինստիտուցիոնալ կարողությունները, մտածելակերպի կարծրատիպերը իրենց ազդեցությունն ունեցան նաև աշխատանքի շուկայի վրա, դրան տալով հետևյալ դրսևորումները.

- ՝ գործազրկության մեծ չափ
- ՝ հանրային զբաղվածության չափերի խիստ անկում և անկառավարելի, ոչ ֆորմալ մասնավոր աշխատաշուկա
- ՝ աշխատավարձի հին կենտրոնացված համակարգի փոխարինում ապակենտրոնացված՝ բանակցության կամ խմբային սակարկման համակարգով
- ՝ գործազրկության աճին զուգընթաց իրական աշխատավարձի անկում:

Ազատ շուկայի պայմաններում ինքնուրույնությունը որոշում կայացնելու հարցում և մասնագիտությունների, զբաղմունքների վարկանիշի ձևավորման

վերաբերյալ որևէ գաղափարախոսության առկայությունը աշխատաշուկայում տարերայնություն է առաջացրել, իսկ կին-անհատի մակարդակով հաճախ դրսևորվում է կրավորականություն, պասիվ արձագանքում պահանջարկին, երբեմն նաև՝ աշխատատեղի պարտադրված կամ կույր ընտրություն:

Այսպես, նախկինում տարբեր արհեստներով և մտավոր աշխատանքով զբաղված կանանց մեծ մասը, և վերջին 2 տարում նրանց միացած մոտ 7 հազար աշխատանքից ազատված ուսուցիչները կամ համալրել են գործազուրկների բանակը, կամ զբաղվածություն գտել իրենց կարողությունից, երբեմն և արժանապատվությունից խիստ ցածր աշխատատեղերում: Դեպի Ռուսաստան, Թուրքիա, Արաբական Միացյալ Էմիրություններ և Սիրիա արտագաղթի ցուցանիշներում մեծ թիվ են կազմում կանայք²:

Նախկին մասնագիտական կարողությունները չօգտագործող և մասնագիտություն չունեցող կանանց զգալի թիվն այսօր ընդգրկված է սպասարկման, առևտրի մասնավոր ոլորտներում, որտեղ կանայք տղամարդկանցից առավել գերադասելի են համարվում գործատուի համար: Բանն այն է, որ թե՛ գործատուների, թե՛ աշխատողների շրջանում աշխատանքային պայմանագրերի կնքման կուլտուրայի բացակայության, փոխհատուցման հարցում խախտումների, վերատադրողական առողջությանը խիստ վնասող աշխատանքային պայմանների, կանայական և ցածր վճարների, աշխատանքային և կառավարման դաժան ռեժիմի նկատմամբ կանայք համեմատաբար թույլ դիմադրություն են ցուցաբերում: Թերևս, նաև սա է պատճառը, որ աշխատող կանանց 80%-ը բավարարված չէ իր աշխատանքով³:

Հայաստանում արձանագրվում է աղքատության ֆեմինացման երևույթ: Դա տեղի ունեցավ, նախևառաջ, այն պատճառով, որ կանայք չկարողացան ընդգրկվել սեփականաշնորհման գործընթացներում և գործատուների թվում նրանք այսօր աննշան տոկոս են կազմում: Երկրորդ՝ չնայած Հայաստանում ֆորմալ կրթության բոլոր մակարդակներում կանանց թիվը գերազանցում է տղամարդկանց թվին, կյանքի նոր պահանջների բավարարմանն ուղղված վերապատրաստման համակարգում կանայք ակտիվ չեն ընդգրկվում, հատկապես՝ 30-ից բարձր տարիքում: Ըստ 2001թ. մարդահամարի տվյալների, թերի կամ լրիվ մասնագիտական կրթություն ունեցողների 75.7%-ը 30-ից բարձր տարիք ունեցողներն են, խորհրդային շրջանում կրթվածները: Նրանք այսօր կորցնում են իրենց մասնագիտական արժեքայնությունը

աշխատանքի շուկայի համար, հակվում դեպի աղքատություն, դառնում սոցիալապես կրավորական, իրենց իրավունքները չգիտակցող, ուստի նաև՝ դրանք չպաշտպանող:

Վերջին տասը տարիների ուսումնասիրությունները վկայում են, որ չնայած հարմարվելու իրենց հսկայական կարողությանը՝ Հայաստանի կանայք նոր իրողություններում ավելի հաճախ դրսևորում են գոյատևման, քան զարգացման վարք, ինչը բացասաբար է անդրադառնում կրթական, աշխատանքային, հասարակական ոլորտներում նրանց ինքնադրսևորման վրա:

Կանանց գործազրկության բովանդակային նկարագրությունից դրա վիճակագրությանը անցնելու փորձը մի շարք պատճառներով ստիպեց մեզ ձեռնպահ մնալ աշխատունակ բնակչության մեջ գործազուրկ կանանց թվի վերաբերյալ պաշտոնական փաստաթղթերին և այլ հեղինակների տվյալներին հղումներ կատարելուց: Պարզվեց, որ ստվերայնությունը և աշխատանքային պայմանագրերի կնքման կուլտուրայի բացակայությունը, ինչպես նաև հանրային օժանդակության համակարգում մնալու ձգտմամբ կամ էլ այդ համակարգում ընդգրկվելու ակնկալիքով իրենց աշխատելու փաստի թաքցնելը կանանց գործազրկության նկարագիրը դարձնում են խիստ աղոտ: Ինչ վերաբերում է արտասահմանյան ուսումնասիրություններին, ապա բերենք մի քանի օրինակ: Այսպես, կարծիք է արտահայտվել, որ «հետխորհրդային երկրներում աշխատաշուկայից կանանց հոժարական դուրս գալը հետևանք է այն բանի, որ խորհրդային կանայք վերակառուցման հայտարարած էմանսիպացիան ընկալեցին որպես չաշխատելու իրավունք» (Բարբլի, 1997): Սակայն այս եզրակացությունը ոչ միայն Հայաստանի, այլև ԱՊՀ մյուս երկրների պարագայում չի համապատասխանում իրողությանը: Կամ՝ «Հայաստանը միակ երկիրն է, որտեղ կանայք տղամարդկանց համեմատ գործազրկության ավելի մեծ չափ են արձանագրում՝ այն էլ 3 անգամ ավելի»⁴: Մեր ընտրած խոշոր շրջաններից հավաքած տեղեկատվությունը գոնե թույլ է տալիս փաստել, որ գործազրկության կենտրոն դիմած մարդկանցից միջին հաշվով 65 տոկոսն են կանայք:

Երևանում և Տավուշի, Լոռու, Շիրակի, Գեղարքունիքի մարզերում անցկացրած ուսումնասիրությունները մեզ հնարավորություն տվեցին ստանալ սեփական տվյալներ կանանց գործազրկության վերաբերյալ, որը, իհարկե, չի կարող լիարժեք համարվել, քանզի տվյալներն, ընդհանրապես,

իսկ հավաստի տվյալները՝ հատկապես, ձեռք բերելու հարցում ունեցանք խիստ դժվարություններ: Այդուհանդերձ, հանրապետության չորս մարզերում 2005թ. հունիսի 1-ի դրությամբ տարածքային պետական գործակալություններում գրանցված գործազուրկների տարիքասեռային կազմի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Գեղարքունիքի մարզի բոլոր շրջաններում էլ պետական գործակալություններ դիմողների 65.7%-ը կանայք են: Սևանի շրջանում գրանցվածների թվում կանայք կազմում են 72.2%, Գավառում՝ 64.4%, Մարտունիում՝ 61.0%, իսկ Վարդենիսում՝ 58.8%: Գեղարքունիքի մարզի բոլոր շրջաններում, որոշ տոկոսային տարբերությամբ, գործազուրկ են հատկապես միջին սերնդի կանայք՝ 31-51 տարեկանները: Այս տարիքային միջակայքում կանանց շրջանում գրանցված գործազրկություն ամենամեծ տոկոսն արձանագրվել է Վարդենիսում՝ 71.7%, ամենացածրը՝ Սևանում՝ 57.9%: Մարտունիում գործազրկության ամենաբարձր մակարդակ է արձանագրվել միջնակարգ կրթություն ունեցողների շրջանում՝ 76.5%, իսկ Վարդենիսի, Սևանի միջնակարգ և միջնակարգ մասնագիտական կրթություն ստացածները կազմում են գործազուրկների մոտ 40%-ը: Գավառը տվյալներ չի տրամադրել:

Շիրակի մարզի տարածքային պետական գործակալություններում գրանցվածների 79.2%-ը կանայք են: Ամասիայում, Աշոցքում, Մարալիկում կանայք կազմում են գրանցված գործազուրկների 67.3%-ը, Արթիկում՝ 72.1%-ը, Գյումրիում՝ 79.9%: Գյումրի քաղաքում աշխատանքի տեղավորման գործակալություն ամենից շատ դիմել են թերի միջնակարգ կրթություն ունեցողները՝ 71.6%: Ըստ կրթական ցենզի պատկերը հետևյալն է. բարձրագույն կրթություն ունեցող կանայք կազմում են գրանցվածների 13.3%-ը, միջնակարգ և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողները՝ 15.1%, թերի միջնակարգ կրթություն ունեցող կանայք՝ 71.6%:

Տավուշի մարզում զբաղվածության կենտրոններում գրանցվածների 63.0%-ը կանայք են: Բարձրագույն կրթությամբ կանայք կազմում են մոտ 56%:

Լոռու մարզի 2005թ. տվյալների ուսումնասիրության արդյունքները ցույց տվեցին, որ մարզում աշխատանք փնտրողների 62.2%-ը կանայք են, իսկ Վանաձոր քաղաքում 64.5%-ը: Վանաձորում աշխատանք փնտրելու փորձ կատարել են ամենից շատ միջնակարգ կրթություն ունեցողները՝ 54.2% և 31-50 տարիքային միջակայքում գտնվողները:

Երևանում 2005թ. հոկտեմբերի տվյալներով գրանցվել է 24081 մարդ, որից 72.6% կանայք են:

Մեզ տրամադրած տվյալները ցույց են տալիս, որ նման կենտրոնների ծառայություններից օգտվելու կանանց ակտիվությունը կախված է այն բանից, թե որքան է շրջանը զարգացած և մայրաքաղաքին մոտ:

Եթե փորձենք հանրապետության բնակչության զբաղվածության մակարդակի հաշվարկը ներկայացնել վերջին պաշտոնական տվյալների հիման վրա, ապա կտեսնենք, որ հանրապետությունում աշխատունակ տարիքի բնակիչների թիվը կազմում է 2003.1 հազար մարդ⁵: Ըստ Կենսաթոշակային ապահովագրության հիմնադրամի ղեկավար Վազգեն Խաչիկյանի 2005թ. նոյեմբերի 1-ին Յ1 հեռուստակայանով արված հայտարարության, հանրապետությունում այդ օրվա դրությամբ աշխատողների թիվը կազմում էր 434 000 մարդ, այսինքն՝ հանրապետության աշխատունակ բնակչության ընդամենը 21.7%: Հավանաբար, սրանք միայն այն աշխատողներն են, որոնք հարկային պատասխանատվություն են կրում պետության առջև: Եթե այս ցուցանիշը համեմատենք Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների իրականացրած տնային տնտեսությունների 2004թ. հետազոտության արդյունքների հետ, կտեսնենք, որ Երևանում զբաղվածները՝ մասնավոր, պետական ոլորտում, արտասահմանյան/միջազգային կազմակերպություններում վարձու աշխատողի, ինքնազբաղվածի, գործատուի կարգավիճակում կազմում են 39.9%, աշխատանք ունի կանանց 31.3%-ը (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Կանանց զբաղվածության պատկերը Երևանում

1	Վ արձու աշխատող մասնավոր ոլորտում	10.3%
2	Վարձու աշխատող պետական ոլորտում	17.0%
3	Վարձու աշխատող արտասահմանյան/ միջազգային կազմակերպությունում	1.0%
4	Ինքնազբաղված	2.7%
5	Գործատու	0.3%
6	Գործազուրկ, աշխատանք են փնտրում	18.4%
7	Սովորող	5.4%
8.	Թոշակառու, հաշմանդամ	26.5%
9	Չեն աշխատում, աշխատանք չեն փնտրում	18.4%
10	Տնային տնտեսուհի	0.1%

Ըստ հարցման արդյունքների, Երևանում կանայք կազմում են գործազուրկների ընդհանուր թվի 77.1%: Նրանց 80.1%-ը գրանցված չէ

աշխատանքի տեղավորման ոչ մի ծառայությունում՝ ոչ պետական, ոչ մասնավոր:

Հարցման արդյունքները վկայում են, որ զբաղված կանանց միայն 19.6%-ն է բավարարված իր ներկա մասնագիտությամբ/դիրքով: Այսինքն՝ կարող ենք ասել, որ մնացած կանանց իրենց զբաղվածությունը չի բավարարում կամ աշխատանքային պայմանների, կամ բովանդակության առումներով: Այս վիճակը ինչպես գործատուի, այնպես էլ աշխատողի տեսակետից անբարենպաստ կարելի է համարել, քանզի այն խոչընդոտում է ինչպես կնոջ ինքնադրսևորումը, այնպես էլ աշխատանքի արդյունավետության ապահովումը:

Չաշխատող կանանց 34.2%-ը պատճառաբանում են, թե «Չեմ կարողանում աշխատանք գտնել/աշխատանք չկա», իսկ 16.5%-ը նշում է, որ «Չի կարողանում պատշաճ վարձատրությամբ աշխատանք գտնել» (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Կանանց չաշխատելու հիմնավորումները

1	Չեմ կարողանում աշխատանք գտնել/աշխատանք չկա	34.2%
2	Չեմ կարողանում պատշաճ վարձատրությամբ աշխատանք գտնել	16.5%
3	Սովորում եմ	0.3%
4	Ցանկություն չունեմ	7.0%
5	Ընտանեկան պատճառներ	33.3%
6	Անաշխատունակ եմ	5.5%
7	Այլ	3.2%

Ցավոք, հարցաթերթիկում պատասխանների առաջարկված տարբերակները հնարավորություն չեն տալիս առանձնացնել աշխատանք չգտնելու ենթակայական և առարկայական գործոնները:

Տնային տնտեսուհիները կազմում են երկանցի կանանց միայն 0.1%-ը: Սակայն «ցանկություն չունեմ աշխատելու» պատասխանն ընտրելը (7%) գրեթե նույնն է, ինչ տնային տնտեսուհու դերի ստանձնումը:

Տվյալները վկայում են, որ Երևանի բոլոր չաշխատող կանանց 84.0%-ը աշխատելու ցանկություն ունի: Նրանցից ամենամեծ տոկոսը՝ 33.3%, չի կարողանում աշխատել «ընտանեկան պատճառներով»՝ երեխայի խնամք, ընտանիքի հիվանդ անդամի խնամք, ամուսինը թույլ չի տալիս և այլն: Սա ունի ինչպես մշակութային/ավանդութային, այնպես էլ սոցիալ-տնտեսական հիմք: Մշակութային/ավանդութային հիմքն ընտանիքում կնոջ դերի մասին


ավանդական մտածելակերպն է և այն հանգամանքը, որ հայ ընտանիքներում դեռևս չի ձևավորվել տվյալ գործում մասնագիտացած անձի մատուցած ծառայություններից օգտվելու կուլտուրան: Բացի այդ, հայ կանանց բնորոշ է վճարովի ծառայությունների որակի և իրավական երաշխիքների հանդեպ անվստահությունը: Դրանք մատչելի չեն շատ կանանց: Ասվածը վերաբերում է նախադպրոցական կրթական կառույցներին, ընտանեկան բժշկի և պետպատվերով բուժվելու ինստիտուտին: Բացակայում է պետական և հորիզոնական կառույցների կողմից հատուկ կարիքներ ունեցողներին սոցիալական ծառայություններ մատուցելու համակարգը:

Կանանց այն խումբը, ովքեր ասում են, թե «Չեմ կարողանում աշխատանք գտնել», ի տարբերություն նախորդ խմբի՝ աշխատանք փնտրում ու չեն գտնում: Հարց է ծագում. ինչպե՞ս են փնտրում և կամ ի՞նչ միջոցներ են ձեռնարկում, որպեսզի շուկան արձագանքի իրենց առաջարկին: Յուրաքանչյուր հնարավորություն դիտարկենք առանձին-առանձին:

Առաջին հնարավորությունը կապված է աշխատանքի տեղավորման պետական և ոչ պետական գործակալությունների հետ:

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների իրականացրած տնային տնտեսությունների 2004թ. հետազոտության արդյունքներով, հարցման մասնակից գործազուրկ կանանց 11.0%-ն է դիմել պետական գործակալության, իսկ 3.2%-ը՝ մասնավոր գործակալությունների: Ընդ որում մինչև 26 տարեկան երևանցիները պետական գործակալություններ ընդհանրապես չեն դիմում: Եթե պետական գործակալություններ հիմնականում դիմում են 36-55 տարիքային միջակայքի ներկայացուցիչները, ապա մասնավոր գործակալություններ դիմողների հիմնական խումբը, ընդհակառակը, շատ երիտասարդներն են՝ մինչև 26 տարեկանները: Սրա պատճառներից մեկը կարող է լինել միջին և բարձր տարիքի կանանց կողմից նորամուծությունների դժվար ընկալումը, մասնավոր կառույցների հանդեպ անվստահությունը: (տե՛ս գրաֆիկ 1)

Պետական գործակալություններ դիմածները ըստ տարիքային խմբերի



Աշխատանք փնտրողների մի մասն է միայն դիմում աշխատանքի տեղավորման գործակալություններ հետևյալ պատճառներով.

Նախ, հատկապես բարձրագույն կրթություն ունեցող կանանց շրջանում գործազուրկի կարգավիճակի ստանձնումը («պիտակավորումը») հոգեբանական խոչընդոտ է հանդիսանում,

երկրորդ՝ բյուրոկրատական քաշքշուկը, նշված ծառայությունների աշխատակիցների վերաբերմունքը նրանց ետ է պահում նման կառույցների հետ շփվելուց,

երրորդ՝ շատ ոչ պետական գործակալություններ վճար են գանձում ինչպես փաստաթղթերը լրացնելու, այնպես էլ իրենց հայտնի աշխատատեղերի մասին տեղեկատվություն տրամադրելու համար,

չորրորդ՝ շատ հաճախ աշխատատեղերի մասին տեղեկատվությունը ընդհանրական, աղոտ, երբեմն կասկածելի է թվում, և կանայք կամ չեն կողմնորոշվում, թե որքանով է այն համապատասխանում իրենց կարողություններին, կամ զգուշավորություն են ցուցաբերում նման հիմնարկների հետ շփվելու հարցում: Ավելին, շատ գործակալություններ իրենք էլ հստակ պատկերացում չունեն առաջարկվող աշխատատեղերի պայմանների և բովանդակության մասին և չեն կարողանում պատասխանել հետաքրքրվողների հարցերին,

հինգերորդ՝ հասարակությունում տեսակետ է ձևավորվել, որ «լավ» աշխատատեղերի մասին տեղեկատվությունը չի տարածվում և ընտրությունը կատարվում է միայն ծանոթներից ու բարեկամներից:

Վերը ասվածից կարող ենք եզրակացնել, որ աշխատանքի տեղավորման թե՛ պետական, թե՛ ոչ պետական ծառայությունները չեն բավարարում աշխատանք փնտրող կանանց պահանջները, նախևառաջ, ծառայություն մատուցելու կուլտուրայի ապահովման տեսակետից:

Քանի որ մասնագիտությունը, որպես գործունեության տեսակ, ենթադրում է կրթությունը շարունակելու հեռանկարով գիտելիքներ, լավ պատրաստվածություն,⁶ ապա թեմայի շրջանակներում կարևորություն է ձեռք բերում և այն հարցը, թե ինչ չափով են Հայաստանում առարկայական և ենթակայական գործոնները ազդում կրթությամբ կանանց մասնագիտության ձեռքբերման, աշխատանքի տեղավորման և մասնագիտական առաջխաղացման վրա: Դիտարկումները ցույց են տալիս, որ կանանց կրթական ու մասնագիտական առաջխաղացման ճանապարհը լեցուն է խզվածություններով:

Կրթության միջոցով կանանց գործազրկության կրճատման, զբաղվածության խթանման հարցում լուրջ առաքելություն ունի ՀՀ Զբաղվածության գործակալությունը իր 51 տարածքային կենտրոններով: Չորս մարզերում (Գեղարքունիք, Տավուշ, Լոռի, Շիրակ) մեր կատարած ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այս շրջաններում տարածքային կենտրոններն ուսուցողական ծրագրեր իրականացնում են:

Գեղարքունիքի մարզի շրջաններում տարածքային կենտրոնների իրականացրած «Համակարգչային հմտություններ», «Ղեկավարի օգնական-ռեֆերենտի հմտություններ», «Հաշվապահություն», «Փոքր բիզնեսի սկզբունքներ» մասնագիտական ուսուցումների արդյունքում աշխատանք է ձեռք բերել ուսուցանվածների 20%-ը, ընդ որում խիստ անհավասար բաշխվածությամբ թե՛ ըստ շրջանների, թե՛ ըստ մասնագիտացումների: Այսպես, «Փոքր բիզնեսի սկզբունքները և զարգացման ուղիները» մասնագիտական դասընթացը (3 ամիս, 305 կին) 5.5 %-ի համար է օգտակար եղել, մինչդեռ համակարգչային և գործավարի հմտությունների պահանջարկը այս շրջաններում մեծ է:

Վարդենիսի շրջանում 2 մասնագիտությունների՝ «Համակարգչային գործավարություն», «Ղեկավարի օգնական-ռեֆերենտ» դասընթացները անցկացվել են 352 ժամով, 8 կնոջ համար, աշխատանք է գտել 1-ը՝ 12.5%:

Սևանի շրջանում «Համակարգչային հմտություններ», «Հաշվապահություն», «Դիզայն» մասնագիտությունների դասընթաց է անցկացվել 90 ժամ տևողությամբ 12 կնոջ համար, նրանցից աշխատանք է գտել 9-ը, կամ 72%-ը:

Գավառի շրջանում «Փոքր բիզնեսի սկզբունքները և զարգացման ուղիները» դասընթաց է անցկացվել 400 ժամ տևողությամբ, 90կնոջ համար, աշխատանք են գտել 5-ը, կան 5.5%-ը:

Մարտունու շրջանում դասընթաց է անցկացվել «Փոքր բիզնես, շուկայական հարաբերություններ» թեմայով 90 ժամ տևողությամբ, որին մասնակցել է 182 կին: Նրանցից և ոչ մեկը աշխատանք չի գտել:

Շիրակի մարզից տվյալներ կարողացանք ձեռք բերել միայն Գյումրիում մասնագիտական ուսուցում անցածների մասին: Աշխատանք փնտրողների 1.2 %-ը` 280 մարդ, որոնց թվում 231 կին (82.5%) մասնակցել է «Ձեռնարկատիրական կարողություններ», «Կարուձև», «Մատուցողի կարողություններ», «Համակարգչային ուսուցում» թեմաներով դասընթացների: Տեղեկատվություն չի տրամադրվել, թե քանիսն են աշխատանք գտել:

Տավուշի մարզում տվյալներ կան Նոյեմբերյանի և Բերդի զբաղվածության կենտրոնների իրականացրած մասնագիտական դասընթացների մասին: Այսպես, Նոյեմբերյանի զբաղվածության կենտրոնը 132 ժամ տևողությամբ դասընթացներ է իրականացրել 29 կնոջ համար: Աշխատանք է գտել 5 կին` դասընթաց անցածների 17%-ը: Ընդ որում, «Համակարգչային հմտություններ» դասընթացն անցածների 14.3%-ը, «Բիզնեսի հիմունքներ»` 28.6%-ը: Բերդի զբաղվածության կենտրոնում նույն դասընթացն անցել է 28 կին, 150 ժամ տևողությամբ, աշխատանք է գտել 3-ը («Համակարգչային հմտություններ» -10.7%, «Բիզնեսի հիմունքներ» 8.7%):

Լոռու մարզում պետական միջոցներով իրականացվել են դասընթացներ հետևյալ ուղղություններով` «Հաշվապահություն», «Համակարգչային դասընթացներ», «Բիզնեսի հիմունքներ»: Այլ տվյալներ չենք կարողացել ձեռք բերել:

Երևանում մասնագիտական ուսուցում անցել է 240 մարդ: Կանանց թիվը չի առանձնացվել:

Ամբողջ հանրապետությունում 1 տարվա ընթացքում ուսուցում անցել է 348 մարդ:

Ցավոք, ուսումնասիրված բոլոր շրջանների համար հնարավոր չէրավ ընդհանրական մեկ աղյուսակ կազմել, քանզի տարբեր շրջաններ և տարբեր գործակալություններ մեզ հետաքրքրող նյութի վերաբերյալ տրամադրել են տարբեր տիպի աղյուսակներ, տարբեր քանակի տեղեկատվություն: Այդուհանդերձ, եթե գնահատելու լինենք զբաղվածության

գործակալությունների դերը կանանց մասնագիտական վերապատրաստման հարցում կարող ենք ասել, որ.

- լ) նրանց կողմից աշխատաշուկայի վերլուծությունը, մասնագիտական պահանջարկի ուսումնասիրությունը լիարժեք չի կատարվում,
- լ) ուսուցողական դասընթացներում ընդգրկվողների ընտրության համակարգ չկա՝ վերցվում են ցանկացողները,
- լ) շատ դասընթացների մասնագիտական խորությունը բավարար չէ,
- լ) դասընթաց անցկացողների մասնագիտական պատրաստվածությունը և դասի արդյունավետությունը չի ստուգվում (տեղեկություն կարող են մասնակցել նրանք, ովքեր լիցենզիա ունեն): Հաճախ անգեյն աչքով էլ երևում է, որ որոշ ուսուցողական նյութեր նշված ժամաքանակում յուրացնել ուղղակի հնարավոր չէ, օրինակ՝ «Փոքր բիզնեսի սկզբունքները և զարգացման ուղիները» դասընթացը: Պետք է նկատենք նաև, որ այս կազմակերպությունների փաստաթղթերում նշված ժամաքանակի, սովորողների թվի և նրանց ընտրության համակարգի բացակայության պարագայում դժվար թե նման բարդության նյութը ընկալելի լիներ, ու դասընթացն ավարտածները՝ որպես մասնագետ, կարողանային աշխատանք գտնել,
- լ) աշխատանքի տեղավորման գործակալությունը՝ որպես միջնորդ, պատասխանատվություն չի կրում վերջնական արդյունքի համար,
- լ) բացակայում է քառակողմ պայմանագիրը, որի պատճառով գործատուն չի ընդունում դասընթացի շրջանավարտին, եթե նրա տարիքը կամ սեռը չեն համապատասխանում իր պահանջին: Գործատու-պատվիրատուն պատասխանատվություն չի կրում մարդկանց աշխատանքի տեղավորելու հարցում, և յուրաքանչյուր դեպքում ցուցաբերվում է սուբյեկտիվ վերաբերմունք: Գործատուները հաճախ նախքան դասընթացի ավարտն արդեն ուրիշ մարդ են ընդունում աշխատանքի:

Ուսումնասիրելով միջին մասնագիտական և բարձրագույն պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններում կանանց ընդգրկվելու օբյեկտիվ հնարավորությունները, մենք պարզեցինք, որ միջին

մասնագիտական և բարձրագույն կրթություն ստանալու հնարավորություններն ըստ շրջանների խիստ տարբեր են:

Միջին մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունների տեսակետից առավել անբարենպաստ վիճակում են Արագածոտնի, Վայոց ձորի, Կոտայքի, Արարատի մարզերի շրջանավարտ աղջիկները, որովհետև Արագածոտնում բացակայում են միջին մասնագիտական պետական հաստատությունները, Վայոց ձորում դրանք աննշան թիվ են կազմում՝ ընդհամենը 1 կառույց կա (տե՛ս աղուսյակ 3):⁷

Աղուսյակ 3

IX-X դասարանցիների միջին մասնագիտական և բուհական կրթության համակարգում ընդգրկվածությունն ըստ շրջանների

Մարզ	IX-X դասարանցիներ	միջին մասնագիտական կրթություն ստացողներ	բուհ ընդունվածներ
ք. Երևան	14683	2915 / 19.9%	5683 / 38.7%
Արագածոտն	2514	-	-
Արարատ	4673	244 / 5.2%	-
Արմավիր	4441	596 / 13.4%	-
Գեղարքունիք	4253	500 / 11.8%	258 / 6.1%
Լոռի	4494	749 / 16.7%	465 / 10.3%
Կոտայք	4992	361 / 7.2%	-
Շիրակ	4898	738 / 15.1%	592 / 12.1%
Սյունիք	2422	455 / 18.8%	314 / 13.0%
Վայոց ձոր	1074	51 / 4.7%	-
Տավուշ	2180	355 / 16.3%	135 / 6.2%
Ընդհամենը	50628	6964 / 13.8%	7447 / 14.7%

Նույն աղբյուրի տվյալներով, ըստ ոլորտների հանրապետության միջին մասնագիտական պետական հաստատություններում ամենաբարձր տոկոսը՝ 23.1% կազմում է առողջապահությունն ու սպորտ մասնագիտացումները, այնուհետև տնտեսագիտությունը՝ 17.5%, հիմնականում «հաշվապահություն» մասնագիտացմամբ: Բոլոր մարզերի կտրվածքով արդյունաբերություն և շինարարություն ոլորտը կազմում է ընդհամենը 6.8%, գյուղատնտեսությունը՝ 2.7%: ՀՀ-ում առկա է միջին մասնագիտական կրթության ոլորտի քանակական ցուցանիշների անհամապատասխանություն կարիքին: Հետևանքը՝ պրոֆեսիոնալ թերի մակարդակ, մրցունակության սակավ հնարավորություն:

Ըստ ՄԶԱՀ տվյալների, 18-22 տարեկաններից միջինում 28%-ն է ընդգրկված բարձրագույն կրթության համակարգում՝ խիստ տարբերություններով ըստ մարզերի⁸, որի հիմնական պատճառներից մեկը

ցածր մատչելիությունն է: Լոռու, Արարատի, Վայոց ձորի ու Արագածոտնի մարզերում 18-22 տարեկանների համար նյութական և ֆիզիկական անմատչելիությունը կազմել է մոտ 40%:

**2. Հայաստանյան ՅԿ-ների դերը կանանց մասնագիտական
վերապատրաստման գործում**

Կանանց մասնագիտական պատրաստման ուղղությամբ հանրապետությունում որոշակի աշխատանքներ են իրականացնում նաև հասարակական կազմակերպությունները, որոնք երբեմն աջակցություն են ցույց տալիս աշխատանքի տեղավորման և՛ պետական, և՛ ոչ պետական գործակալություններին: Մեզանում արձանագրվել են դեպքեր, երբ աշխատանքի տեղավորման պետական գործակալությունը տարածքի հասարակական կազմակերպությունների միջոցով իրականացրել է մասնագիտական վերապատրաստման դասընթացներ և իր շահառուներին օգնել ժամանակավոր զբաղվածություն ձեռք բերել: Այս առումով հատուկ ակտիվություն են ցուցաբերել Շիրակի և Տավուշի ՅԿ-ները: Ինչ վերաբերում է կանանց ուսուցման և զբաղվածության խնդիրների լուծման գործում ՅԿ-ների այլ տիպի ընդգրկվածությանը, պետք է ասել, որ մեր ուսումնասիրության դաշտում են գտնվել հանրապետության ՅԿ-ներով ամենահագեցած մարզերը՝ Շիրակը, Լոռին, ինչպես նաև Գեղարքունիքը, Տավուշը, Երևան քաղաքը: Նշված վայրերում իրականացրած ուսումնասիրությունները ցույց տվեցին հետևյալը.

Գեղարքունիքի մարզից Մարտունու շրջանի 28 ՅԿ-ից 4-ը 231 կնոջ համար իրականացրել են ուսուցում 372 ժամ տևողությամբ: Աշխատանք ձեռք են բերել կամ դրա շնորհիվ պահպանել իրենց աշխատատեղը 151-ը՝ 65.4%-ը: Այս շրջանում առկա է մասնագիտական դասընթացների գովելի զանազանություն՝ «Սոցիալական ծառայություն ծերերի և հատուկ կարիք ունեցողների համար», «Ինքնուրույն գործ սկսելու եղանակները և հմտությունները», «Համակարգչային հմտություններ /օպերատորական կուրս» «Անգլերեն լեզվի ուսուցիչների վերապատրաստում», «Գյուղատնտեսության սանիտարական տեխնիկա», «Մեղվաբուծության հիմունքներ»:

Սևանի շրջանում գրանցված 10 ՅԿ-ից 3-ն է զբաղվում կանանց գործազրկության կրճատման խնդիրներով: Այստեղ ՅԿ-ները 114 ժամյա դասընթացներում ընդգրկել են 76 կին, որոնցից 26-ը աշխատանք է գտել (34%):

Վարդենիսի շրջանում 12 ՀԿ-ից երկուսը 112 ժամ տևողությամբ 24 կնոջ համար իրականացրել է զբաղվածության ապահովմանն ուղղված ծրագրեր, աշխատանք են գտել 16.7%-ը:

Գավառի շրջանի 38 ՀԿ-ից միայն մեկը 15 կնոջ համար իրականացրել է 20-ժամյա դասընթաց, աշխատանք չի գտել և ոչ մեկը:

Ճամբարակում գործող 8 ՀԿ-ից երեքը 56 կնոջ համար կազմակերպել են մասնագիտական ուսուցանում: 12 կին, կամ 21.4%-ը աշխատանքի է տեղավորվել: Եթե մյուս շրջաններում, որոնք ավելի կապված են մայրաքաղաքին և տուրիստական երթուղիներին, առավել մեծ պահանջարկ են ունեցել ձեռքի աշխատանքի մասնագիտությունները, դարձել այդ կանանց համար եկամտի աղբյուր, ապա ճամբարակում դրանք կիրառություն չեն գտել:

Շիրակի մարզի մոտ 130 հասարակական կազմակերպություններից յոթն է իրականացրել մասնագիտական վերապատրաստման դասընթացներ: Դրանց մասնակցել է 3000 կին: Նրանցից աշխատանք են գտել 59-ը, այսինքն՝ 2%-ը: Աշխատանք են գտել հատկապես ձեռքի աշխատանքներում հմտացած կանայք (գոբելենագործություն, հելուճագործություն, շյուղագործություն, ժանեկագործություն, մասամբ էլ վարսահարդարություն ու հրուշակագործություն): Դասընթացներում ընդգրկվել են նաև հաշմանդամ կանայք և աղջիկներ, ինչը աղետի գոտու համար շատ խրախուսելի է: Ուշադրության արժանի է Շիրակում գործող ՀԿ-ի կողմից 20 կնոջ համար իրականացրած այնպիսի մասնագիտական պատրաստման դասընթացը, ինչպիսին «Լրագրողական և համակարգչային հմտություններն» է, որից հետո կանայք ութը տարբեր լրատվական միջոցներում այդ մասնագիտությամբ աշխատանքի են տեղավորվել:

Լոռու մարզում գրանցված կին շահառուներ ունեցող մոտ 50 ՀԿ-ներից ընդամենը յոթն է 20-55 տարեկան կանանց համար վերջին 2-3 տարում իրականացրել մասնագիտական վերապատրաստման կամ որակավորման բարձրացման ծրագիր: Դասընթաց անցկացվել է 1016 ժամտևողությամբ, մասնակցել է 192 կին, աշխատանք է գտել 46-ը՝ 24%: Առավել մեծ հաջողություններ են արձանագրել ժողովրդական արհեստների գծով մասնագիտացումները, այդ դասընթացներն անցածների գրեթե 90%-ը աշխատանք է գտել:

Տավուշի մարզում կին շահառուներ ունեցող 20 ՀԿ-ներից 15-ը 11714 ժամ տևողությամբ մասնագիտական ուսուցման ծրագրեր են իրականացրել 1383 կնոջ համար: Աշխատանք գտել է 28.6%-ը:

«Ձեռագործ» մասնագիտացմամբ 41 կնոջից աշխատանք է գտել 34.1%-ը, «Համակարգչային տեխնիկա» մասնագիտացում ստացած 481 կնոջից՝ 15.0%-ը, «Օտար լեզվի» ուսուցում անցած 278 կանանցից՝ 31.7%-ը:

Կարիտաս միջազգային կազմակերպության դասընթացները համակարգչային գործավարություն/անգլերեն մասնագիտացմամբ որոշ արդյունավետություն է արձանագրել՝ 72 կին, 112 ժամ: Աշխատանք է գտել 22.2%-ը:

Երևանում կանանց խնդիրներով զբաղվող մոտ 150 ՀԿ-ից 34-ը՝ ըստ իրենց առաքելության, մտահոգված են կանանց զբաղվածության խնդիրներով: Իսկ սրանցից մասնագիտական ուսուցման ծրագրեր են իրականացրել 17-ը, 9-ը հաշմանդամ կանանց համար, մնացածները՝ առանց հատուկ կարիքներ ունեցողների: Ընդհանուր առմամբ վերջին 2-3 տարում մասնագիտական դասընթաց են անցել երևանցի 1050 կին՝ «Համակարգչային հմտություններ», «Փոքր և միջին բիզնես», «Վարսահարդարություն», «Ֆլորիստ-դիզայներ», «Հաշվապահություն», «Խոհարարություն», «Կաթնամթերքի արտադրություն» ուղղություններով: Աշխատանք գտել է 104 կին՝ 9.9%-ը:

Ինչպես ցույց են տալիս տվյալները, ՀԿ-ների կողմից իրականացրած մասնագիտական ուսուցման ծրագրերը այնքան էլ առատ չեն, իսկ իրականացվածները՝ ոչ այնքան արդյունավետ: Դրա պատճառները, մեր կարծիքով, հետևյալն են:

Նախ, կանանց համար մասնագիտական դասընթացի ընտրությունը ՀԿ-ները հաճախ կատարում են՝ առանց հաշվի առնելու տարածքում դրանց պահանջարկը և առկա մարդկային ռեսուրսների մակարդակը:

Երկրորդ՝ դասընթացին դիմող կանայք իրենք էլ տեղյակ չեն այդ մասնագիտացումների պահանջարկին:

Երրորդ՝ որոշակի կարողություններ ձեռք բերած կանայք բավարար հմտություններ, ակտիվություն չունեն «վաճառելու» իրենց կարողությունները:

Չորրորդ՝ վկայական են ստանում բոլորը՝ «մասնակցության համար», որի հետևանքով վկայականի արժևորությունը գործատուն կասկածի տակ է առնում:

Փորձը ցույց է տալիս, որ դասընթացի մասնակիցների 25-30%-ն է լիարժեք յուրացնում նյութը, ուստի վկայական պետք է ստանան միայն նրանք, արդյունքում կբարձրանա դասընթացների արդյունավետությունը ինչպես մասնակիցների ընտրության, մասնակիցների ուշիմության, այնպես էլ սերտիֆիկատի արժևորության առումներով:

Հինգերորդ` ՉԿ-ները իրենք ակտիվ ընդգրկված չեն կանանց կարողությունների հզորացմամբ նրանց գործազրկության կրճատման գործընթացներում, որովհետև ունեն մարդկային թույլ ռեսուրսներ և կողմնորոշված են դեպի դոնորը, ոչ թե դեպի սեփական շահառուն: ՉԿ-ները մասնագետներ չեն կարողանում առաջարկել տեղեկատվային մրցույթներին, իսկ իրենց ունեցած աշխատատեղերի համար քչերն են բաց մրցույթ հայտարարում:

Մինչդեռ 2003-2006 թվականներին ԱՅՈԾ գործազրկության կրճատմանն ուղղված քաղաքականություններում էական տեղ է հատկացված ՉԿ-ներին հետևյալ կետերով.

1. «Հասարակական աշխատանքներին մարդկանց ներգրավելու կարգի պարզեցում: Զբաղվածության ծրագրերի արդյունավետության բարձրացում»

2. «Միջազգային և օտարերկրյա դոնոր և ոչ կառավարական կազմակերպությունների հետ հասարակական աշխատանքի մասնակցել ցանկացողների ներգրավման մեխանիզմների միասնականացում»⁹:

Աշխատանք փնտրելու և գտնելու մյուս ճանապարհը` սեփական նախաձեռնությամբ վերապատրաստվելն է կամ նոր մասնագիտություն ձեռք բերելը: Այս հարցում Երևանի կանանց ակտիվության աստիճանը բացահայտելու նպատակով անդրադարձանք ՉԿԿ հարցման արդյունքներին: Դրանք ցույց տվեցին, որ կանանց ընդամենը 18.4%-ն է աշխատանք գտնելու հաջողությունը կապում կրթության հետ, իսկ 11.0%-ը մասնագիտական ունակությունների, շնորհքի, տաղանդի հետ:


Կանանց կարծիքով, Հայաստանում աշխատանք գտնելու հարցում առավել կարևոր գործոններ են. ոչ ֆորմալ կապերը` «ծանոթությունները» - 37.83%, «փողը» - 10.3%, «բախտը» - 1.70%: Ընդ որում բոլոր տարիքային խմբերը համակարծիք են այս հարցում:

Մասնագիտական ունակությունները որպես աշխատանք գտնելու գործոն համարելու զուգորդումը տարիքի հետ ներկայացավ հետևյալ գրաֆիկի տեսքով, որը բացատրել չենք կարողանում (տե՛ս գրաֆիկ 2): Այսպես,

մասնագիտական ունակությունները ամենից շատ արժևորում են 26-35 տարեկան կանայք, այնուհետև 16-20 և 46-55 տարեկանները: Չարմանալիորեն ցածր են այն արժևորել 36-45 տարեկան և 56 և ավելի բարձր տարիքի կանայք:

Գրաֆիկ 2


Մասնագիտական ունակությունների արժևորումը ըստ տարիքային խմբերի



Ամենից շատ կրթությունը, որպես աշխատանք գտնելու գործոն են դիտում 16-20 տարեկանները և 26-35 տարեկանները: Այս գործոնի առնչությամբ ստացված գրաֆիկային պատկերը, թերևս, բացատրելի է: (Տե՛ս գրաֆիկ 3):

Գրաֆիկ 3

Կրթության, որպես աշխատանք գտնելու գործոնի արժևորումը տարբեր տարիքային խմբերի կողմից



Այսպես, 16-20 տարիքային միջակայքում գտնվող երիտասարդներին շատ հեշտ է թվում կյանքը: Նրանք համոզված են լինում, որ իրենց ընտրած մասնագիտական ուսուցումը գլխավոր գործոնն է աշխատանք գտնելու համար: Գրաֆիկի կտրուկ անկումը 21-25 տարիքային միջակայքում ցուցադրում է իրականության հետ երիտասարդների բախումը և ապրած հիասթափությունը: 26-35 տարիքային միջակայքում գրաֆիկի կտրուկ բարձրացումը ցույց է տալիս արդեն իրականության դժվարությունները հաղթահարողներին: Մնացած տարիքային խմբերը խորհրդային տարիներին

ուսուցում և դաստիարակություն ստացած մարդիկ են, որոնք դժվար են կողմնորոշվում նոր իրողություններում և հիասթափություն են ապրում, չհավատալով աշխատանք ձեռք բերելու հարցում կրթության ուժին:

Ելնելով ասվածից, բոլորովին պատահական չենք համարում, որ հարցման մասնակից կանանց ընդամենը 6.7%-ն է ընդգրկված որևէ կրթական ծրագրում, ուսուցողական կամ մասնագիտական պատրաստման դասընթացներում (բոլոր հարցվողների 7.6%): Ուսուցողական կամ մասնագիտական պատրաստման դասընթացների մեջ ամենից շատ ընդգրկված են «վարձու աշխատողները» պետական ոլորտում (22.7%) և «վարձու աշխատողները» տեղական մասնավոր ոլորտում (21.3%): Այս երկու խմբերը մասնագիտական առաջխաղացման խնդիր են լուծում, ինչը խիստ դրական միտում է, քանզի երկու սեկտորում էլ տեղի է ունենում մասնագիտական կառուցվածքների կատարելագործում, ներմասնագիտական պահանջների ավելացում:

Հարցման արդյունքները ցույց տվեցին, որ հարցմանը մասնակցած գործազուրկ կանանց 18.4%-ը աշխատանք է փնտրում: Ասենք, որ 174 աշխատանք փնտրողներից ուսուցողական կամ մասնագիտական պատրաստման դասընթացներում ընդգրկված է ընդամենը 11 կին: Վերապատրաստման, մասնագիտական պատրաստման դասընթացներ 63 կնոջից հաճախում են ընդամենը 2, քուլեջ/տեխնիկում՝ 7 կին:

Փորձենք բացատրել այս տվյալները: Վերլուծելով Երևանում աշխատանք գտնելու հարցում կրթության արժևորման և հնարավորության հարցը, տեսանք, որ, նախ, մեզանում քիչ թվով մարդիկ են կրթություն ու մասնագիտություն ունենալը համարում աշխատանք գտնելու պայման, երկրորդ՝ քիչ են շուկային արագ արձագանքող՝ մասնագիտական որակավորման, վերապատրաստման կարճաժամկետ ծրագրերը, երրորդ՝ շատ ծրագրեր բարձր վճարի պատճառով ուղղակի մատչելի չեն կանանց համար, չորրորդ՝ շատ ծրագրեր իրականացվում են միայն Երևանում, և շրջաններում ապրող կանայք տեխնիկական պատճառներով չեն կարող ընդգրկվել դրանցում, հինգերորդ՝ շատ կանայք այնքան ակտիվ ու ճկուն չեն, որ կարողանան ուսուցողական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն գտնել, գնահատել դրա կարևորությունը իր աշխատանքային կյանքում:

Նյութական պատճառը ուսումնական ծրագրում չներգրավվելու հարցում քչերն են նշել (11.5%): Ուսման հետ կապված ծախսերի հիմնական աղբյուր են՝

1. անձնական եկամուտը - 3.3%
2. ընտանիքի այլ անդամի եկամուտը - 54.1%
3. ազգականների/ ընկերների օգնությունը - 8.2%
4. վարկը/փոխառությունը/պարտքը - 4.9%

Տվյալները վկայում են, որ սովորողների 62%-ը ընտանեկան, ազգակցական աջակցություն և հավանություն է ստանում իր ընտրության հարցում: Սովորողները բավական մեծ ինքնուրույնություն են դրսևորում: «Դա իմ ծնողների որոշումն էր» պատասխանը նշել է ընդամենը 3.3%-ը: Տեղին է անդրադառնալ մեզանում նորամուծություն հանդիսացող՝ ֆինանսավարկային համակարգի հետ գործառնությունների մեջ կանանց ընդգրկվելու հարցին: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ կանանց գրեթե 21%-ը «բիզնեսի, ներդրումների», «կրթության համար վճարելու նպատակով» օգտվել է բանկերից, վարկեր տրամադրող այլ կազմակերպություններից, հատուկ վարկային ծրագրերից:

Կոնկրետ հաստատությունում ուսանելու հիմնական շարժառիթների վերլուծությունը ցույց տվեց, որ հարցմանը մասնակցած մայրաքաղաքի կանանց 64%-ն է կրթության իր ընտրած ճյուղը և հաստատության ձևը կապում մասնագիտություն, աշխատանք ձեռք բերելու, մասնագիտությունը սիրելու շարժառիթի հետ: Մնացած 36%-ը իրենց ընտրությունը բացատրում են «դիպլոմ ունենալու», «հաջող ամուսնանալու», «ընտանիքի ավանդույթը շարունակելու» ցանկությամբ, ինչը ապագայում աշխատանքային գործունեությունից բավարարություն ստանալու կամ աշխատանք գտնելու տեսակետից սակավ արդյունավետ գործելակերպ է:

Բոլոր նրանք, ովքեր ընդգրկված են ուսումնական գործընթացներում, հիմնականում համոզված են դրա օգտակարության մեջ՝ 77.0%-ը կարծում է, որ իր մասնագիտությամբ աշխատանք կգտնի (տե՛ս աղյուսակ 4-ը):

Հայաստանում աշխատանք գտնելու գործոնները,
Ուսանելու հիմնական շարժառիթը

<u>Հայաստանում աշխատանք գտնելու գործոնները</u>	Կապեր/ ծանոթություններ	Կրթություն	Մասնագիտական ունակություններ, շնորհք, տաղանդ	Աշխատասիրություն	Աշխատանքային փորձ	այլ
	37.8%	18.4%	11.0%	10.6%	2.3%	19.9%
<u>Ուսանելու հիմնական շարժառիթը</u>	Դիպլոմ ստանալ	Ընտանեկան ավանդույթ	Մասնագիտական հաջող առաջխաղացման հնարավորություն	Սեր մասնագիտության հանդեպ	Լավ աշխատանք արտասահմանում	այլ
	9.8%	23.0%	49.2%	13.1%	1.6%	3.3%
<u>Յուս, որ Հայաստանում աշխատանք կգտնեն</u>	Կարծում են, կգտնեն իմ մասնագիտությամբ	Կարծում են, կգտնեն ոչ իմ մասնագիտությամբ	Կարծում են, չեն գտնի	Չեն պատրաստվում աշխատանք փնտրել		
	77.0%	6.6%	13.1%	3.3%		

Չնայած ներկա մասնագիտությամբ և դիրքով բավարարված են աշխատող կանանց ընդամենը 19.6%-ը, այդուհանդերձ մնացածները չեն ձգտում վիճակը շտկել սեփական կարողությունների հզորացմամբ կամ սոցիալական ակտիվությամբ:

Որևէ կրթական համակարգում չընդգրկվածների մեջ մեծ տոկոս են կազմում նրանք, ովքեր պատճառաբանում են. «Ինձ համար արդեն ուշ է սովորել»՝ 44.1%: Դրանք 30-ից բարձր տարիքի կանայք են: Սա, մի կողմից, մտածելակերպի խնդիր է՝ շատ կանայք իրենք են իրենց հնարավորությունների դրսևորման շրջանակը սահմանափակում միայն ընտանիքով, հետոպրոցական կրթությունը կապում միայն բուհի, տեխնիկումի հետ, մյուս կողմից էլ, աշխատանք գտնելու առաջին անհաջողությունից թերարժեքության բարդությամբ պարուրվելու հետևանք:

Նշված պատճառներով կանայք իրենց համար սեփական կրթական կենսագրության վերին շեն են սահմանում, որը որպես ընտրություն, ի վերջո, իրենց իսկ չի բավարարում:

3. Հայաստանի զբաղվածության ոլորտում կանանց դժվարությունների հաղթահարման ուղիները

Հայաստանյան հասարակության փոխակերպման տարիներին աշխատուժի պահանջարկի և ճյուղային կառուցվածքի կրճատմանը զուգահեռ մեծ փոփոխություններ են կրել աշխատուժին ներկայացվող մասնագիտական պահանջները: Սա հանգեցրել է աշխատուժի պահանջարկի և առաջարկի անհամապատասխանության՝ կառուցվածքային գործազրկության առաջացմանն ու խորացմանը: 2001թ. Հայաստանում մեկ տարուց ավել գործազուրկները կազմել են 73%, իսկ 2002-ին՝ 78%:¹⁰

Շատ երկրների փորձը ցույց է տալիս, որ գիտելիքի վրա հենված էկոնոմիկան ենթադրում է տնտեսության բոլոր ցիկլերում մարդկային կապիտալի զարգացմանն ուղղված ներդրումներ, որոնք ապահովում են տվյալ պահին աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցված՝ սովորելու ճկուն, գրավիչ, բարձր որակի ոչ ֆորմալ հնարավորությունների ստեղծում: Մարդկային կապիտալի զարգացմանն ուղղված այս ներդրումները ձևավորում են նոր ժամանակների համար անհրաժեշտ պրոֆեսիոնալների բանակ: Պրոֆեսիոնալը զբաղվում է իր գործունեության ձևին համապատասխանող որոշակի ենթակուլտուրայի սիստեմատիկ ձեռքբերմամբ, ինչը ենթադրում է որակավորում, պատասխանատվություն, էթիկա, վարվելակերպ, հմտություններ, անձնային գիտելիքներ: Մասնագիտական արդյունավետության մակարդակի պահպանման, դրա ավելացման այս ձգտումը անհնար է իրականացնել առանց երկրում շարունակական կրթության այնպիսի համակարգի առկայության, որը կարտացոլի տվյալ երկրի ինչպես տնտեսական ենթակառուցվածքների, սոցիալական ապահովության գործող համակարգի, ժողովրդագրական ցուցանիշների, այնպես էլ մշակութային, ավանդական առանձնահատկությունները:

Այս տեսակետից արժեքավոր ենք համարում ՄԱԿ-ի 1995թ. բացահայտումները, որոնք կարող են տեսական աջակցություն ցույց տալ զբաղվածության ոլորտում կանանց դժվարությունների հաղթահարման խնդիրներով զբաղվող հայաստանյան կառույցներին: Տարբեր երկրների փորձի ուսումնասիրությունը ՄԱԿ-ի փորձագետներին հնարավորություն է տվել բացահայտել, որ աղքատության ֆեմինացման վրա էապես ազդում են երեք գործոններ՝ ուժեղ ընտանեկան կապերը, երկրում կանանց համար զբաղվածության առկա հնարավորությունները և սոցիալական

ապահովության համակարգը: Այս երեք գործոնները գրեթե հավասարաչափ բարձր մակարդակով առկա են, օրինակ, այն երկրներում, որտեղ տղամարդկանց և կանանց աղքատությունը մոտավորապես հավասար է (Իտալիա, Շվեդիա, Նիդեռլանդներ): Այն երկրներում, որտեղ կանանց աղքատությունն ավելի բարձր է, քան տղամարդկանց շրջանում (մոտ 130 աղքատ կնոջը բաժին է ընկնում 100 աղքատ տղամարդ), օրինակ, Ավստրալիայում, ԱՄՆ-ում, այդ երեք գործոններն ավելի ցածր մակարդակով են հանդես գալիս: Այն երկրներում, որոնք կանանց զբաղվածության լավ համակարգ ունեն, բայց համեմատաբար թույլ ընտանեկան կապեր և սոցիալական ապահովության համակարգ, կանանց թիվը աղքատության ցուցանիշներում ավելի փոքր է (120-130):¹¹ Այս բացահայտումների հիման վրա ուսումնասիրությունների խորացումը հանգեցրել է այն մտքի, որ ողջ հասարակության և առանձին անձի համար օգտակար է այն քաղաքականությունը, որը աղքատության կրճատումը իրականացնում է, սոցիալական և մշակութային աջակցություն ցույց տալով այն կանանց, ովքեր ձգտում են ճկուն լինել և՛ աշխատաշուկայում, և՛ ընտանեկան պարտականություններում: Այս գործընթացի հաջողությունը պայմանավորված է ինչպես առարկայական, այնպես էլ ենթակայական գործոններով: Այսինքն՝ նախ, կանանց համար կազմակերպված կրթության ձևը պետք է նրանց համար ուղի հարթի դեպի աշխատանքի շուկա, արժանի եկամուտ և արդար փոխհատուցում, երկրորդ՝ կանայք իրենք պետք է ցանկանան ու կարողանան հաջող ինտեգրվել և՛ հասարակությանը, և՛ նրա կրթական գործընթացներին: Այսպիսի գործելակերպը կօգնի կանանց արագ փոփոխվող աշխարհում զարգացնել համապատասխան աշխատանային հնարավորությունները որսալու հմտություններ:


Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այս ուղղությամբ որոշ քայլեր սկսել են կատարել պետական կառույցները: Սա վկայում են գործազրկության կրճատմանն ուղղված 2003-2006 թվականների ԱՅՈԾ իրականացման քաղաքականություններում առկա առաջարկությունները (տե՛ս աղյուսյակ 5)¹²:

Քաղաքականություն	Նպատակ	Պատասխանատու
Մասնագիտական որակավորման որոշակի գործառույթների փոխանցում գործարար միավորներին	Գործարար միջավայրի բարելավում	Մասնագիտական որակավորման իրավասու մարմիններ
Աշխատուժի շուկայի կարգավորման կատարելագործումը և աշխատուժի հաշվառման մեխանիզմների ներդրումը	Ստվերային գործունեության ծավալների կրճատում և կանխարգելում	ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն, ՀՀ սոցիալական ապահովագրության պետական ծառայություն
Գործազրկության ապահովագրման ներկա քաղաքականության արմատական փոփոխություն և անցում զբաղվածության ակտիվ քաղաքականության իրականացման	Զբաղվածության քաղաքականության արդյունավետության բարձրացում	ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն
Գործազրկության ապահովագրության դադարեցում	Սոցիալական ապահովության համակարգի արդյունավետության բարձրացում	ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն
Զբաղվածության ծրագրերի ֆինանսավորման մեխանիզմների զարգացում	Սոցիալական ապահովության համակարգի արդյունավետության բարձրացում	ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն
Գործազուրկների վերապատրաստման մեխանիզմների զարգացում	Սոցիալական ապահովության համակարգի արդյունավետության բարձրացում	ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն
Գործազրկության նպաստների փոխարինում գործազրկության օժանդակությամբ	Սոցիալական ապահովության համակարգի արդյունավետության բարձրացում	ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն
Գործազուրկներին ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու ֆինանսական օգնության դադարեցում և ազատված միջոցների ուղղում գործազուրկների մասնագիտական վերապատրաստման	Զբաղվածության ծրագրերի արդյունավետության բարձրացում	ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն
Հասարակական աշխատանքների մարդկանց ներգրավելու կարգի պարզեցում	Զբաղվածության ծրագրերի արդյունավետության բարձրացում	ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն
Միջազգային և օտարերկրյա դոնոր և ոչ կառավարական կազմակերպությունների հետ հասարակական աշխատանքի մասնակցել ցանկացողների ներգրավման մեխանիզմների միասնականացում	Զբաղվածության ծրագրերի արդյունավետության բարձրացում	ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն
Մասնագիտական վերապատրաստման ծրագրերի որակի բարձրացում	Վերապատրաստման ծրագրերի՝ ժամանակակից կրթության պահանջներին համապատասխանեցում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների	Մասնագիտական ուսուցման համակարգի՝	ՀՀ կրթության և գիտության

համակարգի ամրապնդման համալիր ծրագրի իրագործում	աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին համապատասխանեցում	նախարարություն
--	---	----------------

Աղյուսակից երևում է, որ յուրաքանչյուր քաղաքականության համար գործի են դրվել կառավարության այն օղակները, որոնք ամենասերտ առնչությունն ունեն աշխատանքային փոխհարաբերությունների խնդրի կարգավորման, կոռուպցիայի հաղթահարման, գործազուրկներին աջակցման և տարբեր սեկտորներ դրանում ընդգրկելու խնդիրների լուծմանը: Սակայն նշված քաղաքականությունների ընդունումը անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է դրանք իրականացնելու, այն էլ արդյունավետ իրականացնելու առումով: Պահանջվում են որոշ օժանդակ քայլեր, ինչպես օրինակ.

- 1) ապահովել նշված քաղաքականությունները կյանքի կոչելու համապատասխան օրենսդրական դաշտը
- 2) ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից բացահայտել (կամ օգտվել նմանատիպ հետազոտությունների արդյունքներից).
 1. յուրաքանչյուր մարզի մասնագիտական կարիքները, մասնագիտական ավանդույթները,
 2. առկա մարդկային ռեսուրսների մակարդակը,
 3. ժողովրդագրական զարգացումները,
 4. համայնքներում պահանջարկ ներկայացնող մասնագիտությունների ցանկը
 և միջնակարգ մասնագիտական համակարգի ցանցում շրջաններն ըն
- 3) Կառավարության կողմից քննարկել և որոշում կայացնել Երևանի ուսումնական հաստատությունների մի մասը ըստ առավելագույն կարիքի տեղափոխել շրջաններ՝ դրանց համապատասխան ենթակառուցվածքների ապահովմամբ:
- 4) Աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությանը առաջարկում ենք գործազուրկ կնոջ աշխատանքի տեղավորման քայլեր իրականացնել ըստ այս սխեմայի.



Ինչպես ցույց տվեց հետազոտությունը, փոխակերպվող հայաստանյան հասարակության մեջ կանանց սոցիալ-տնտեսական ակտիվության դրսևորումներում առկա են ինչպես ենթակայական, այնպես էլ առարկայական գործոններ: Դրանք կապված են կանանց կրավորականության և նրանց կրթության, աշխատանքի խնդիրների լուծմանը կոչված կառավարական և ոչ կառավարական կառույցների ինստիտուցիոնալ կարողությունների անբավարար մակարդակի, ինչպես նաև ըստ հանրապետության շրջանների կանանց ինքնադրսևորման համար հնարավորությունների խիստ տարբերակման հետ: Այս ամենը հանգեցրել է գործազրկության բարձր ցուցանիշի և աղքատության ֆեմինացման: Ուստի Հայաստանի զբաղվածության ոլորտում կանանց դժվարությունների հաղթահարումը պայմանավորված է կրթության և սոցիալական անվտանգության համակարգերի, ոչ կառավարական կառույցների միասնական քաղաքականության իրականացմամբ, որոնք կնպաստեն հասարակության

մեջ սոցիալական արդարության հաստատմանը և կիսթանեմ կանանց
ակտիվությունը՝ սեփական ճակատագրում պատասխանատվությունը
ստանձնելու հարցում:

Գլուխ II Հայաստանում կանանց քաղաքական ակտիվության հարցերը

1. Հայաստանում կանանց քաղաքական ակտիվության դրսևորումները

Հայաստանում ընթացող համակարգային կառուցվածքային փոփոխությունների, ինչպես նաև համակեցության արժեքային ու նորմատիվ համակարգի արդիականացման խնդրի համատեքստում տեսական և գործնական նոր հնչեղություն է ձեռք բերել յուրաքանչյուր քաղաքացու մասնակցային վարքի ապահովման խնդիրը: Սոցիալական պետության մեջ քաղաքացին պետք է ճանաչի իր տնտեսական և սոցիալական իրավունքները, որոնք ուղղակիորեն վերաբերում են նրա անձի լիարժեք զարգացմանը և կյանքի համապատասխան ստանդանտներին հասնելու ուղիներին:

Որոշումներ կայացնելու գործընթացին քաղաքացու միջնորդավորված մասնակցությունը ընտրություններին մասնակցելն է: Դա որոշ առումներով միկրո (անհատներ) և մակրո (իշխանություններ) մակարդակներում ուրիշների և սեփական անձի առջև պատասխանատու լինելու ունակություն է: Այն յուրաքանչյուր անհատի մեջ խթանում է ըմբռնումը, որ իր գործողությունները կարող են նպաստել թե՛ իր, թե՛ մեկ ուրիշի մարդկային պոտենցիալը կյանքի կոչելուն: Մասնակցությունը ավելին է, քան ընտրությունների գնալը: Այն ենթադրում է նաև ընդգրկում գործընթացներում բոլոր մակարդակներում՝ դեբատներ, իրավունքների անհավասարության դրսևորման դեմ հանրային քարոզչություն:

ՀՌԿԿ հարցման արդյունքները ցույց են տալիս, որ վերջին նախագահական ընտրություններին մասնակցել է կանանց 75.16%-ը, խորհրդարանական ընտրություններին՝ 67.5%-ը: Նրանք ապահովում են քաղաքական ակտիվության ձևական կողմը, քանզի վերջին 12 ամիսների ընթացքում հանրային քաղաքական գործունեության՝ քաղաքական ցույցերին, հանրահավաքներին, բողոքներին մասնակցել է կանանց 4.4%-ը: Սա փոխակերպվող հասարակության համար խիստ ցածր տոկոս է: Քաղաքացիական մասնակցությունը կարողություն և հնարավորություն է ազդել քաղաքականության և որոշումների կայացման վրա վերջնագրերի և լոբբինգի միջոցով, կառուցել կոալիցիաներ և համագործակցել շահագրգիռ կազմակերպությունների հետ, մասնակցել սոցիալական և քաղաքական

գործընթացներին՝ ընդգրկվելով քաղաքական կուսակցություններում, հետաքրքրության խմբերում, մասնակցելով ընտրությանը, ցույցերին և այլն:

Բոլոր հարցվողներից որևէ քաղաքական կուսակցության անդամ է 1.0%-ը՝ 135 մարդ, որոնցից կանայք են՝ 1.6%-ը, իսկ ՉԿ անդամ են 0.8 %-ը:

Ընտրական քաղաքականությանը արդյունավետ մասնակցության, քաղաքական շարժումներում կանանց կողմից իրենց տեսակետների արտահայտման մշակույթը մեզանում դեռևս չի ձևավորվել: Ավելին. գյուղական շրջաններում շատ հաճախ քվեարկում են ընտանիքով, և հայրն է որոշում, թե ում և ինչին պետք է ձայն տալ: Դեռևս չձևավորված կուսակցական համակարգը, ընտրական գործընթացներից բնակչության պարբերական հիասթափությունները հանգեցրել են այն բանին, որ ոչ միայն կինը ինքը չի ուզում մտնել իշխանության և բիզնեսի սեկտորներ, այլև այդ հարցում չի խրախուսում ու չի սատարում ընկերուհուն: Ուղղաձիգ և հորիզոնական մակարդակներում քաղաքական մշակույթի, հասարակության մեջ քաղաքական սոցիալականացման համակարգի բացակայության պատճառով մեզանում գործող իրավիճակային կուսակցությունները, որտեղ անհատի շուրջ համախմբված են խոստում ստացած իր ընկերները, ժողովրդի շրջանում համակրանք չեն վայելում: Այդ կուսակցությունները խնդիր չեն դնում իրենց կառույցներում ընդգրկել կանանց, և կանանց կողմից էլ այդ կառույցներում ընդգրկվելու մեծ ձգտում չի արձանագրվում:

Ըստ կատարված ուսումնասիրությունների, 21-րդ դարի հայաստանցի կնոջը բնորոշ քաղաքական ակտիվության մակարդակը միջին է: Քաղաքականությանը բավարար չափով հետաքրքրված են երևանցի կանանց 50.8%-ը, քաղաքական հարցեր քննարկում են մայրաքաղաքի կանանց 36.7%-ը:

Վերջին նախագահական ընտրություններին առանձնապես կրավորական դիրք են զբաղեցրել մինչև 20 տարեկան կանայք, առավել ակտիվ են եղել 56-ից բարձր տարիք ունեցողները:

Խորհրդարանական ընտրություններին չմասնակցած կանայք իրենց այդ քայլը բացատրում են «անօգուտ լինելով» (38.4%), «քաղաքականությանը չհետաքրքրվելու» հանգամանքով (8.2%): 5.9%-ը չի մասնակցել խորհրդարանական ընտրություններին «որպես բողոքի նշան»:

Որպես կանանց սոցիալ-քաղաքական ակտիվության ցուցանիշ կարելի է դիտարկել նրանց իրազեկության մակարդակը, հաշվի առնելով տեղեկատվության աղբյուրները: Այսպես, երկրի քաղաքական նորությունների

վերաբերյալ կանայք տեղեկություններ ստանում են հիմնականում հեռուստատեսությունից՝ 90.5%: Մամուլից, ինտերնետից օգտվում են երևանցի կանանց 11.5%-ը: Առավել խորքային ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջիններից բնակչության 1/3-ը չի կարողանում օգտվել, ելնելով սեփական նյութական վիճակից, իսկ մամուլից շատերը չեն օգտում, որովհետև չեն վստահում: Կանանց համար որպես տեղական քաղաքական նորությունների աղբյուր հանդիսացող ոչ ֆորմալները՝ ընտանիքը, հարևանները, ընկերները, գործընկերները, կազմում են 18.7%:

Մասնակցության մյուս խթանը՝ ցանկությունը, մեծապես պայմանավորված է երկրում իրականացվող քաղաքական կուրսից բավարարվածության աստիճանով: Այս տեսակետից պետք է ասել, որ երևանցիների միայն 23.0%-ն է կարծում, որ երկիրը ճիշտ ուղղությամբ է գնում: Եվ այս պարագայում շատերը ընտրել են ոչ թե այն շտկելու ուղին, այլ օտարվելու: Երևանի բնակչության 30%-ն է վստահում նախագահին, իսկ 11%-ը՝ խորհրդարանին:

Իշխանությունների և դրանց կառույցների նկատմամբ վստահության արձանագրված մակարդակով խիստ դժվար է ժողովրդի ու նրա մի մասի՝ կանանց սոցիալ-քաղաքական ակտիվությունը ապահովելու խնդրի լուծումը:

Քաղաքացիական ակտիվությունը սոցիալականացման գործընթացի արդյունք է, որն իրականացվում է այն կառույցներում, որոնք նախորդում են անհատների չափահաս դառնալուն, համընկնում ընդհանուր կրթության ժամանակահատվածին: Սկսվելով դպրոցում՝ այն շարունակվում է ողջ կյանքի ընթացքում ֆորմալ և ոչ ֆորմալ կազմակերպություններում, ինստիտուցիոնալ բոլոր մակարդակներում: Ձևավորվող քաղաքացիական ակտիվությունը ունի իմացական (կօգնիտիվ), վերաբերմունքի (աֆեկտային) և վարքային (ծրագրային) մակարդակներ ու ձևեր: Կոլեկտիվ կյանքի ձևերի և հասարակության մեջ դրանց զարգացման ուղիների, տարբեր ինստիտուտների դերի ու գործառնության մասին համապատասխան գիտելիքները և ընկալումը ռացիոնալ մասնակցային վարքի ձևավորման հիմքն են: Ձևավորված համոզմունքը յուրաքանչյուրին թույլ է տալիս տեսնել իր տեղը հասարակության մեջ: Սա քաղաքացիական կրթության սխեման է, որը ջանում է ապահովել մասնակցություն, գործողություններ, քննադատական մտածողություն և այլն:

Մասնակցությունը անհատների ընդգրկումն է հանրային որոշումներ կայացնելու գործընթացներում, որը յուրաքանչյուր անձի հիմնարար իրավունքն է: Այն խթանում է երկրում ժողովրդավարության մշակույթի ձևավորումը: Դրան հաջորդում է անցումը իմացական մակարդակից կիրառական մակարդակի՝ ուղղված խնդիրների լուծմանը, տարաբնույթ փոփոխությունների ներմուծմանը: Այն անպայման պարունակում է իմացական (կոգնիտիվ) բաղադրամաս, այլապես դա կդրսևորվի որպես անկարգություն, ինչը հաճախ բնորոշ է դառնում հայաստանյան շարժումներին:

Քննադատական մտածողությունը, վերլուծությունը քաղաքացիական կրթության արդյունքներից մեկն է: Այն ուսումնասիրության, մեկնաբանության, ներկայացման, վերլուծության կարողությունների ամբողջությունն է: Ինչպես նաև կարծիքի ձևավորման, տեսակետի արտահայտման, պաշտպանման, մամուլի վերլուծության, դեբատների մասնակցության, ծրագրային աշխատանքի կարողություն է: Սակայն համայնքային և ազգային մակարդակով մասնակցությունը կախված է ինչպես միմյանց, համայնքների և առկա ինստիտուտների գործընթացներում ընդգրկվելու՝ անհատների կարողությունից, այնպես էլ ցանկությունից: Առաջինը ենթադրում է մտածելու, գործելու, արձագանքելու, մյուսների հետ համագոյակցելու կարողություն: Երկրորդը՝ իր դրսևորած վարքի իմաստավորում:

Կարողությունները ենթադրում են գիտելիքներ, արժեքներ, հմտություններ, որոնք տրվում են ինչպես ֆորմալ, այնպես էլ ոչ ֆորմալ ուսուցման միջոցով և սովորելու միջավայրի առկայության պայմաններում:

Այս ճանապարհին հետխորհրդային մարդը հաճախ դրսևորվում է աֆեկտիվություն, քանի որ անհատները իրենց և իրենց հարաբերությունները հակադրում են առաջարկվող նորմերին, դեռևս չտեսնելով կապը իրենց վիճակի բարելավման ու այս մակարդակների և հատկապես արժեքների ընկալման միջև:

Քաղաքացիական կրթությունը՝ անկախ մարդու տարիքից և հասարակության մեջ ունեցած դերից, շարունակական գործընթաց է, բայց մեզանում համակարգված չի իրականացվում: Քաղաքացիական կրթությամբ հնարավոր է ձևավորել մասնակցությունը խթանելու կուլտուրա, հաշվետու լինելը, սոցիալական հանդուրժողականությունը, փոխընթացումը,

համայնքային համախմբվածությունը: Փորձը ցույց է տալիս, որ շատ փոխակերպվող հասարակություններ այս իրավիճակներում դժվարությունները փորձել են հաղթահարել հորիզոնական կառույցների օգնությամբ: Դրանք Հայաստանում մոտ 4000 են, փորձենք վերլուծել դրանց գործունեությունը այս տեսակետից:

2. Քաղաքացիական հասարակության դերը կանանց քաղաքական ակտիվության ձևավորման գործընթացներում

Հաշվի առնելով քաղաքացիական հասարակության տարրերի գործառնության, որպես ներքևից եկող նախաձեռնության հանգամանքը, ճկուն գործելու հնարավորությունները, պետք է ասել, որ վերջիններս սոցիալ-քաղաքական ակտիվության ձևավորման տեսակետից շատ հարմար կառույցներ են: Հայաստանում քաղաքացիական հասարակության տարրերից քիչ թե շատ ձևավորված են ՀԿ-ները, որոնք ուսուցողական բազմազան և բազմաթիվ ծրագրեր են իրականացնում, ընդգրկելով դրանցում հատկապես կանանց, անկախ այն հանգամանքից, զբաղվում է արդյոք կազմակերպությունը կանանց խնդիրներով, թե ոչ: Այս ծրագրերը ֆինանսավորվում են միայն միջազգային և օտարերկրյա ներկայացուցչությունների կողմից:

Հայաստանում ՀԿ-ները 10-15 տարվա կենսագրություն ունեն: Որպես գաղափար և ֆորմատ այն ներմուծված է, և խորհրդահայ մարդը դեռևս պատրաստ չէ լիարժեք ընկալել թե՛ հայեցակարգը, և թե՛ նրա գործնական դրսևորումները՝ հորիզոնական կառույցներ ստեղծելու և աշխատեցնելու ձևերն ու մեթոդները: Այսօր էլ հետխորհրդային հայ մարդը գերադասում է հարցերը լուծել անձնական կապերով, օրենքի շրջանցմամբ և համոզված չէ, որ դա հնարավոր է անել քաղաքացիական նախաձեռնությամբ: Պատահական չէ, որ Արդարադատության նախարարությունում գրանցված ՀԿ-ների մեծ բանակից առավելագույնը 10 տոկոսին ենք տեսնում ասպարեզում: Խորհրդային, ինչպես նաև ազգային մտածելակերպի մի շարք առանձնահատկություններ, ապակենտրոնացման չափազանց դանդաղ ընթացքը խիստ բացասաբար են անդրադարձել հանրապետությունում քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացների վրա: Հասարակական կազմակերպությունների ուսուցման և տեղեկատվության միջոցների կենտրոնի 1997թ. հետազոտության արդյունքներով, հասարակական կազմակերպություններին վստահում էր բնակչության ընդամենը 3%-ը¹: Ընտրական համակարգերի միջազգային հաստատության 2001թ. անցկացրած հետազոտության տվյալներով բնակչության 43%-ը դրանց դերը Հայաստանում կարևոր և անհրաժեշտ է համարել²: Սակայն, անգամ ՀԿ-ների դերը բարձր գնահատողները վերացական, ոչ լիարժեք պատկերացում ունեն այս ինստիտուտի, ժողովրդավարական համակարգի

սահմաններում նրա գործելու հնարավորությունների մասին: Առանձին հասարակական կազմակերպություններին տրված գնահատականները ցույց են տալիս, որ հայ իրականության մեջ հորիզոնական կառույցների նկատմամբ անվստահությունը խիստ մեծ է: Ասվածը փաստում են 2004թ. ՀՌԿԿ հետազոտության արդյունքները, ըստ որոնց ՀԿ-ների գործունեությունը անձի քաղաքացիական իրավունքների պաշտպանության տեսակետից երևանցիների միայն 10%-ն է արդյունավետ համարել:

Որքան զարգացած և իրավական է երկիրը, այնքան մեծ է հասարակական կազմակերպությունների դերը և ընդհակառակը՝ աղքատության բարձր **մակարդակ** արձանագրող երկրներում բնակչությունը դրանց հնարավոր դերը իր կյանքում համեմատաբար փոքր է համարում ու չի վստահում:

Համաշխարհային ուսուցում կազմակերպության 2000թ. ուսումնասիրությունների արդյունքում պարզ էր դարձել, որ Հայաստանի ոչ կառավարական սեկտորը աշխատեցնում են հիմնականում կանայք՝ ավանդական ընտանիքի մոդելով, չնայած ՀԿ-ների մեծ մասի պաշտոնական ղեկավարները տղամարդիկ են:³ Կանանց խնդիրներով զբաղվում են շատ ՀԿ-ներ՝ հիմնականում կանանցից կազմված և կին շահառուներ ունեցող: Կազմակերպությունները ղեկավարում են իրենց մտածելակերպով ու արժեքներով, խոսքի և գործելակերպի անհամապատասխանությամբ փոխակերպվող հասարակության նույն անդամները՝ արձանագրելով թույլ հաջողություններ:

Ուսումնասիրությունների արդյունքներից երևում է, որ հասարակության մեջ ժողովրդավարության, քաղաքացիական հասարակության և նրա արժեքների մասին տեսական պատկերացումները, վերացական կարևորումը և իրականության մեջ դրանց գործնական դրսևորումների ընկալումներն ու գնահատականները տրամագծորեն տարբեր են: Ակնհայտ է, որ «քաղաքացիական հասարակության դասական ըմռնման և բնակչության շրջանում դրա պատկերացումների բովանդակային ծավալները և արժևորումները միմյանց չեն համապատասխանում»⁴:

Մեր ուսումնասիրությունների արդյունքում ստացված տվյալները թույլ են տալիս ասել, որ եթե մասնագիտական ուսուցման տեսակետից կին շահառու ունեցող ՀԿ-ները այսօր Հայաստանում այնքան էլ ակտիվ չեն գործում, ապա քաղաքացիական կրթության ժամաքանակների և կանանց ընդգրկման թվաքանակի տեսակետից ՀԿ-ները լավ ցուցանիշներ են

արձանագրում: Ինչ վերաբերում է կանանց քաղաքացիական կրթությանը ուղղված ուսուցողական ծրագրերի արդյունավետությանը, ապա տարիների դիտարկումները ցույց են տալիս, որ ա/. դասընթացներին մասնակցում են հիմնականում հարևան ՅԿ-ների նույն ներկայացուցիչները և քիչ դեպքերում լայն հասարակությունը, բ/. մտածելակերպի առանձնահատկությունները առաջացնում են լսած նյութի ընկալման դժվարություններ, կամ ընկալումից դեպի արժեք և վարքի ձև փոփոխության բացակայություն, գ. սովորածը հանրապետությունում ներդնելու լուրջ խոչընդոտները, որոնք ստեղծվում են պետական, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, հաճախ մարդկանց ստիպում են ետ կանգնել սկսած գործից:

Ասվածը փաստում է, որ անհրաժեշտ է էքստենսիվ և ինտենսիվ եղանակներով բարձրացնել ՅԿ-ների իրականացրած ծրագրերի արդյունավետությունը և ապահովել քաղաքացիական հասարակության տարրերի հետ ֆորմալ կառույցների գործընկերությունը:

Օգտագործած գրականության գանկ

Գլուխ I

¹ MM ինդեքսը կազմել է 0.494, արևմտյան 0.542-ի համեմատ (Blackburn R.M. et al, 1993..)

² Տե՛ս 2001թ. համաշխարհային զեկուցագիր 2002թ. հունիսի 6-ին ԱՄՆ

Պետքարտուղարության հրապարակած մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ:

³ <http://www.crrc.am> Հետազոտության նպատակների և խնդիրների բնութագրմամբ, այն գնահատում է Երևանում տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական իրավիճակը: Հարցվողների թիվը՝ 1500 մարդ: Դաշտային աշխատանքները տեղի են ունեցել 20.05.2004 - 18.06.2004: Ընտրանքը կատարվել է ըստ 2004 թվականի մարտի հոսանքի սպառողների ցուցակի տվյալների: Տեղեկատվության հավաքումը իրականացվել է անհատական հարցազրույցի միջոցով: Իրականացնող կազմակերպությունը՝ Ֆինանսավորման աղբյուրը՝ Նյու Յորքի Կառնեգի կոռպորացիան: Տվյալների հասանելիությունը ազատ է:

⁴ Տե՛ս Gender in transition. The World Bank. Eastern Europe and Central Asia Region. May 21,2002. Page xi.

⁵ <http://www.armstat.am-arm-StatData-2004-3 population.pdf.url>.

⁶ Տե՛ս ԱձԹ՝ ձԹ՝ ԱձԹձԹ, "Í áeí òí ðúá í ðí áeáí ù ñí òeí eí áeè í ðí Óáññeé'1965. Äæí í Ðáeñ e Ñáeèè Õí ì eéí ñí í èç eí eáè Á.É Õí ì ñí í , Á. Í ðeñðeè, "Ñí òeí eí áeý" 1998, ñԾԾ.328

⁷ «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2002թվականին» վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա, Երևան 2003, էջ 26-65:

⁸ ՀՍՍ 05, Մարդկային աղքատությունը ՀՀ մարզերում, տեղեկատվական-վերլուծական պարբերական, հունիս 2004, էջ 13:

⁹ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, Երևան 2003, էջ 179-190

¹⁰ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, Երևան 2003, էջ147:

¹¹ Տե՛ս UN report 1995:

¹² Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, Երևան, 2003, էջ 179-190:

Գլուխ II

¹ Տե՛ս՝ Սկրտչյան Ա., Երկրի բնակչության միայն 3%-ն է տեղյակ ՀԿ գործունեությունից, ՀԿԿ Լրատու, 1998, թիվ 4, էջ 8

² Տե՛ս՝ Քարսոն Թ., Քաղաքացիների իրազեկությունը և մասնակցությունը Հայաստանում, ազգային սոցիոլոգիական հարցում- 2001, Երևան, 2001, էջ 22:

³ «Հայաստանի ՀԿ սեկտորի գնահատումը», Երևան, 2001:

⁴ Սկրտչյան Ա., Հայաստանում հումանիտար մասնագիտությունների բնագավառում աշխատող մտավորականների և այդ մասնագիտություններն ընտրած ուսանողների վերաբերմունքը քաղաքացիական հասարակության կառուցման գործին, «Մարդու իրավունքների և ժողովրդավարության ինստիտուտ», Երևան, 1999, էջ 21: